

միայն քիչ մը սե սե բիծեր ունին :
Կտուցը սե է և ծայրէն դէպ 'ի գլու-
խը դեղին գիծ մը ունի :

Երբոր աս թռչունները ոտքի վը-
րայ կը կենան կամ կը քալեն , մար-
միննին շիտակ կը բռնեն , գլուխնին
վեր , և թևերնին քսակի պէս երկու
քովէն կախուած : Երոնց կերակու-
րը ձուկ է , և ջրէն դուրս՝ թուխս
նստելու ատեն կ'ելեն . և որովհետեւ
իրենց բնական ծովերուն մէջ ձուկ
շատ կը գտնուի , ուստի ամենեւին ու-
տելիքի նեղութիւն չեն քաշեր , ինչ-
պէս իրենց գիրութենէն ալ կ'իմա-
ցուի : ջրին տակէն խիստ արագ կը
վազեն , և չափէ դուրս շատակեր են .
մտերնին պինդ է ու համա ալ անա-
խորժ , թէպէտեւ անգղիացի նաւա-
վարները ախորժելով կ'ուտեն : Ա-
րայի կաշին անանկ հաստ ու փետուր-
ները անանկ խիտ են որ դանակ չբա-
նիր վրան :

Թռչունները շատը մէկտեղ կը բը-
նակին Հարաւային Վերիկայի մէջ ,
ու ժայռերու վրայ խումբ խումբ ժող-
վուած կը տեսնուին , այնպէս որ կար-
ծես թէ շատ մը թռչուններ խորհուր-
դի նստեր են : Բնակին բոյն չեն շի-
ներ , հապա հողը քիչ մը կը փորեն ու
հաւկիթնին հոն կը դնեն . իրենց
մարմնոյն ու փետուրներուն տաքու-
թիւնը այնչափ սաստիկ է որ քիչ ա-
տենուան մէջ ձագերը կ'ելեն : Տա-
րին երկերկու հաւկիթ կ'ածեն՝ հա-
ւու հաւկըթի պէս ճերմակ :

ԺԱՄԱՆԱԿԱԿՈՅ ԴԻՊՈՒԱԾ

ՊԵՇԵՅԷ ԵՂԵՅԵՐԻՐՈՒԽԱՆ :

ԵՆՑԱԾ սեպտեմբերի վերջերը
Պաղղոյ թագաւորին առջեւ հան-
դիսաւոր մեծ փորձ մը ըրեր էին զի-
նուորները . հանդէսը լըննալէն ետքն

ալ թագաւորը պատուանշան բաժնե-
ր արժանաւորներուն : Են միջոցին
գեղեցիկ դիպուած մըն ալ եղեր է որ
հոս դնելը կ'արժէ :

Օրնուորներուն մէջ Սուլինիէ ա-
նունով երկու եղբայր կան եղեր եր-
կուորեակ , որ զարմանալի սիրով մը
իրարու հետ կապուած են : Օրնու-
րագրութեան ատենը վիճակը ասոնց-
մէ մէկուն վրայ ելեր է , մէկալը ա-
զատ մնացեր է եղեր . բայց ազատ
մնացողը իր սիրելի եղբորմէն զատուիլ
չկրնալով՝ ինքն ալ նոյն գնդին մէջ
կամուսորապէս զինուոր կը գրուի :

Վանի մը տարիէն ասոնք ալ իրենց
գնդին հետ կ'անցնին Վփրիկէ , ու
Ղէզայիրի պատերազմներուն մէջ կը
մտնեն : Ինչպէս կ'ըլլայ որ մէկ օր մը
ասոնք իրարմէ կը զատուին , ու մէկը
Կոստանդինա քաղաքը առնողներուն
մէջ գտնուելով՝ լաւ քաջութիւն մը
կ'ընէ . ուստի պատուոյ նշանը երբ
ըլլայ՝ առնելիքը գիտէ , բայց իրեն
սրտին մեծ ցաւ է եղեր որ մինակ պի-
տի առնէ ան նշանը :

Եւ բաներս սպարապետին ականջը
կը հասնին , անիկայ ալ թագաւորին
որդւոյն կը հասկըցընէ , ու երկուք-
նին մէկտեղ կը խնդրեն թագաւորէն
որ մէկին տեղը երկու պատուանշան
տայ Սուլինիէ եղբայրներուն : Ուս-
տի աս անգամ որ սպարապետը ար-
ժանաւոր զինուորներուն անունը տա-
լով մէկիկ մէկիկ անոնք առաջ կ'անց-
նին ու թագաւորին ձեռքէն պա-
տուանշանը կ'առնեն եղեր , մէյմըն
ալ սպարապետը Սուլինիէ անունով
երկու եղբարքն ալ մէկէն կը կանչէ ,
թագաւորն ալ երկուքին ալ կուտայ
պատուանշանը : Տեսնողները այնչափ
կը զմայլին աս բանիս վրայ որ իբր
թէ իրենք ըլլային փառաւորուողնե-
րը՝ այնպէս կ'ուրախանան :